



Ս. ՅԱԿՈԲԻ Ն Ե Ր Ս Է Ն

* Կիր. 1 Մայիս. — Կարմիր Կիրակի: Ս. Պատարազը մատուցուեցաւ Ս. Յարութեան Տաճարի Ղերնատան մեր մատուռին մէջ: Ժամարարն էր Հոգչ. Տ. Ռուբէն Վրդ. Յովակիմեան:

* Շր. 7 Մայիս. — Ս. Պատարազը մատուցուեցաւ Ս. Գլխաղիր: Ժամարարն էր Հոգչ. Տ. Հայկազուն Արդ. Մելիքոնեան:

* Կիր. 8 Մայիս. — Տօն Երեւման Ս. Խաչին (351): Ըստ սովորութեան, առաւօտեան ժամերգութեան աւարտին և «Անդատան»էն առաջ, Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ բնթերցումը 351 թուականին, Ս. Պաշտօնաւոր երեւման տօթիւ, երուսազէմի Կիւրեղ Հայրապետին Կոստանդ կայսեր յրած թուղթին թարգմանութեան: Ապա Ս. Պատարազ մատուցուեցաւ Աւագ Սեղանին վրայ, որուն վերելք կը տեւնուէր վառ կանթեղներով զարդարուն նշանը Ս. Պաշտին: Ժամարարն էր Հոգչ. Տ. Յովակի Վրդ. Մամուր:

* Շր. 14 Մայիս. — Ս. Պատարազը մատուցուեցաւ Ս. Գլխաղիր: Ժամարարն էր Հոգչ. Տ. Գեղարդ Արդ. Տաւուտյարեան:

* Կիր. 15 Մայիս. — Ս. Պատարազը մատուցուեցաւ Ս. Յարութեան Տաճարի մեր մատուռին մէջ: Ժամարարն էր Հոգչ. Տ. Ռուբէն Արդ. Յովակիմեան:

* Դչ. 18 Մայիս. — Կէսօրէ ետք ժամը 2ին, վաղուան Համբարձման տօնին առթիւ, Գերշ. Տ. Կիւրեղ Եպս. Գարիկեանի զլիաւորութեամբ, Միաբան Հայրեր ինքնաշարժներով բարձրացան Ձիթենեաց լեռ, ուր Համբարձման սրբաբալայրին վրայ կատարուած ուխտի արարողութենէն և Լատինաց թափօրէն ետք, մեր վրանամատուռին մէջ պաշտուեցան ժամերգութիւն և նախատօնակ:

— Գիշերասկիզբին, նոյն վայրին վրայ պաշտուեցան «Ճիւղեցէ»ի և Հսկման կարգեր, և, կարճ դադարէ մը ետք, գիշերային և առաւօտեան ժամերգութիւններ: Հանդիսացեան էր Հոգչ. Տ. Հայկասեր Վրդ. Պայրամեան: Արարողութիւնները աւարտեցան գիշերուան ժամը 10ին, որմէ ետք Միաբանութիւն և ուսանողութիւն ինքնաշարժներով վերադարձան Մայրավանք:

* Եչ. 19 Մայիս. — ՀԱՄԲԱՐՁՈՒՄՆ ՏԵՆՈՒՆ: Առաւօտեան ժամը 7ին, դարձեալ Գերշ. Տ. Կիւրեղ Եպիսկոպոսի զլիաւորութեամբ, Միաբանութիւնը ինքնաշարժներով բարձրացաւ Ձիթենեաց լեռ, ուր «Հրաշափառ»ի Հանդիսաւոր մուտքէն ետք Գերշ. Սրբազանը մատոյց օրուան Հանդիսաւոր Ս. Պատարազը մեր վրանամատուռին մէջ և քարոզեց ճաշու Գրքէն առաջ՝ խօսելով Համ-

բարձման խորհուրդին շուրջ: Արարողութեան ներկայ եղաւ Ամեն . Պատրիարք Ս . Հայրը , որ եւ նախագահեց «Հայր մեր»էն առաջ , Մայր Աթոռի Սիսէն Ս . Էջմիածին փոխադրութեան տարեդարձի Մաղթանքին : Ս . Պատարազէն ետք , Գերշ . Պատարազիչ Սրբազանը նախագահեց սրբաժայրին առջեւ կատարուած «Անդաստան»ին :

— Կէսօրէ ետք , Մայր Տաճարին մէջ կատարուած «Անդաստան»ին նախագահեց Գերշ . Տ . Նորայր Արքեպս . Պողոսեան :

* Ծր . 21 Մայիս .— Ս . Պատարազը մատուցուեցաւ Մայր Տաճարի տանիքին վրայ բացուող Ս . Համբարձման մատուռին մէջ : Ժամարարն էր Հոգշ . Տ . Ասպետ Արղ . Պալեան :

— Բ . Ծաղկազարդի նախատօնակը պաշտուեցաւ Ս . Հրեշտակապետաց եկեղեցիին մէջ : Հանդիսապետն էր Գերշ . Տ . Կիւրեղ Եպս . Գարիկեան :

* Կիր . 22 Մայիս .— Երկրորդ Ծաղկազարդ : Առաւօտեան ժամերգութիւնը պաշտուեցաւ եւ Ս . Պատարազը մատուցուեցաւ Ս . Հրեշտակապետաց եկեղեցիին մէջ : Ժամարարն էր Հոգշ . Տ . Յովսէփ Վրդ . Մամուր :

* Ծր . 28 Մայիս .— Ս . Պատարազը մատուցուեցաւ Մայր Տաճարի տանիքին վրայ բացուող Ս . Առաքելոց մատուռին մէջ : Ժամարարն էր Հոգշ . Տ . Սեւան Վրդ . Ղարիպեան :

— Հոգեգալստեան հանդիսաւոր նախատօնակը պաշտուեցաւ Ս . Յակոբեանց Մայր Տաճարին մէջ , նախագահութեամբ Ամեն . Պատրիարք Ս . Հօր : Ապա կատարուեցաւ քահանայական կոչման արարողութիւն :

* Կիր . 29 Մայիս .— ՀՈՒՆԳԱՐԱՆ (Պեմտեկոստէ) : Բարեկենդան Եղիական պահոց : Օրուան հանդիսաւոր Ս . Պատարազը՝ Մայր Տաճարի Աւաղ Սեղանին վրայ մատուց Գերշ . Տ . Ծահէ Արքեպս . Աճէմեան եւ Ամեն . Պատրիարք Ս . Հօր ձեռամբ կատարուած երեք ընծայեաներու քահանայական ձեռնադրութենէն ետք քարոզեց , յորդորելով նորընծաները անսակարկ նուիրումով ծառայելու իրենց եկեղեցիին եւ ժողովուրդին : Ս . Պատարազի աւարտին կատարուեցաւ նորընծաներու վեղարի տրուութեան կարգը :

— Կէսօրէ ետք , Գերշ . Տ . Կիւրեղ Եպս . Գարիկեան նախագահեց Մայր Տաճարին մէջ կատարուած «Անդաստան»ին , որմէ քիչ ետք գլխաւորեց Միտան Հայրերէ եւ Ժառանգաւոր սաներէ բաղկացած թափօրը ղէպի Սիոն լեռ , ուր Ս . Փրկչի ազգային դերեղմանատան մէջ , հանդուցեալ Պատրիարքներու համար կատարուած հոգեհանգստեան պաշտամունքէն ետք բոլորն ալ բարձրացան Վերջին Ընթրիքի վերանաւունք : Տօնին յատուկ շարականներու երգեցողութենէն եւ Ս . Գրական ընթերցումներէն ետք խօսք առաւ Գերշ . Սրբազանը , որ բրաւ սրբաժայրին պատմականը եւ ապա իր խօսքը ուղղելով ուսանողութեան , յորդորեց դանտէք ապաղախի արթուն պահակները ըլլալ սրբաժայրերու պաշտպանութեան , որոնք այնքան աչքառու տեղ մը ապահոված են մեր ժողովուրդին Սուրբ Երկրին մէջ : Յետոյ թափօրը մեկնեցաւ ղէպի յիշեալ սրբաժայրէն քիչ անդին գտնուող Գերման Կաթոլիկներու Տորմիսիոնի եկեղեցիին , կառուցուած Ս . Կոյսի ննջման վայրին վրայ : Հոն եւս Գերշ . Սրբազանը հարկ եղած լուսարանութիւնները տուաւ ներկաներուն :

* Ծր . 4 Յունիս .— Է . օր Հոգեգալստեան : Ս . Պատարազը մատուցուեցաւ Մայրավանքի տանիքին արեւելակողմը գտնուող Ս . Հոգւոյ մատուռին մէջ : Ժամարարն էր Հոգշ . Տ . Գեղարդ Արղ . Տաւուտարեան :

— Կէսօրէ ետք , Ս . Հրեշտակապետաց եկեղեցիին մէջ , ժամերգութեան աւարտին , կատարուեցաւ քահանայական կոչման արարողութիւնը Բարշ . Սիմօն Սրկ . Էրկիւնեանի :

* Կիր. 5 Յունիս. — Յիշատակ Եղիայի մարգարէին: Ս. Պատարազը մատուցուեցաւ Ս. Յարութեան Տաճարի մեր վերնամասուռին մէջ: Ժամարարն էր Գերշ. Տ. Կիւրեղ Եպս. Գարիկեան, որ կատարեց ձեռնադրութիւնն ու օծումը Բարշ. Սիմոն սարկաւազին, զայն վերակոչելով Տ. Սեպուռ Արեղայ: Զեռնադրութեան երկրորդ բաժնին ներկայ գտնուեցաւ նաև Ամեն. Պատրիարք Ս. Հայրը, որ Ս. Պատարազի աւարտին կատարեց վեղարի տրուութեան կարգը նորընծային:

— Ս. Հռիփսիմեանց նախատօնակը պաշտուեցաւ Ս. Հրեշտակոպետաց Եկեղեցիին մէջ: Հանդիսապետն էր Գերշ. Տ. Կիւրեղ Եպս. Գարիկեան:

* Բշ. 6 Յունիս. — Ս. Կուսմացն Հռիփսիմեանց: Առաւօտեան ժամերգութիւնը պաշտուեցաւ Ս. Հրեշտակոպետաց Եկեղեցիին մէջ, իսկ Ս. Պատարազը մատուցուեցաւ Եկեղեցիի աւանդատան՝ Ս. Հռիփսիմէի մատուռին մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Հայկազուն Արդ. Մելիգոնեան:

* Ուր. 10 Յունիս. — Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպս. Ասլանեան:

* Ծր. 11 Յունիս. — Ս. Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին: Յիշատակ Ելանելոյն ի Վիրապէն: Ս. Պատարազը մատուցուեցաւ Մայր Տաճարի աւանդատան Ս. Լուսաւորչի սեղանին վրայ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Ապետ Արդ. Պալեան:

— Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Գերշ. Տ. Կիւրեղ Եպս. Գարիկեան: Ապա ծնրադիր «Տէր ողորմեա» երգուեցաւ:

* Կիր. 12 Յունիս. — Տօն Կաթուղիկէ Եկեղեցւոյ Ս. Էջմիածնի: Ս. Պատարազը մատուցուեցաւ Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Յովսէփ Վրդ. Մամուր: «Հայր մեր»էն առաջ, Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպս. Ասլանեանի նախագահութեամբ կատարուեցաւ «Հայրապետական Մաղթանք» վասն Ս. Էջմիածնի:

— Կէսօրէ ետք, Մայր Տաճարին մէջ կատարուած «Անդաստան»ին նախագահեց Գերշ. Տ. Կիւրեղ Եպս. Գարիկեան:

* Եշ. 16 Յունիս. — Նորընծայ Հոգշ. Տ. Կոմիտաս Արդ. Երպէթճեան իր անդրանիկ Ս. Պատարազը մատոյց Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ:

* Ուր. 17 Յունիս. — Նորընծայ Հոգշ. Տ. Բարսեղ Արդ. Գալէմտէրեան իր անդրանիկ Ս. Պատարազը մատոյց Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ:

* Ծր. 18 Յունիս. — Ս. Մեծին Ներսիսի Հայրապետին եւ Խաղայ Եպիսկոպոսին: Նորընծայ Հոգշ. Տ. Եղնիկ Արդ. Պալեան իր անդրանիկ Ս. Պատարազը մատոյց Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ:

* Կիր. 19 Յունիս. — Բարեկենդան Ս. Լուսաւորչի պահոց: Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ Ս. Պատարազ մատոյց նորընծայ արեղաներուն վարժիչն ու ուսուցիչը՝ Հոգշ. Տ. Գեղարդ Արդ. Տաւուտյարեան: Ըստ սովորութեան, նորընծաները կը սպասարկէին Ս. Խորհուրդին: Ներկայ էր Ամեն. Պատրիարք Ս. Հայրը:

* Ուր. 24 Յունիս. — Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Գերշ. Տ. Կիւրեղ Եպս. Գարիկեան:

* Ծր. 25 Յունիս. — Գիւտ նշխարաց Ս. Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին: Ս. Պատարազը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Մակարայ մատուռին մէջ, ուր, ըստ աւանդութեան, թաղուած է մասունքը Ս. Լուսաւորչի: Ժամարարն էր, Պրոսէն Հիւրարար Ս. Աթոռ ժամանած Հոգշ. Տ. Մանուէլ Արդ. Երկաթեան:

* Կիր. 26 Յունիս. — Ս. Պատարազը մատուցուեցաւ ի Ս. Յարութեան, վեր-

նատան մեր մատուռին մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Մանուէլ Արղ. Երկաթ-
հան:

* Բշ. 27 Յունիս.— Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ իր անդրանիկ Ս.
Պատարազը մատուց նորընծայ Հոգշ. Տ. Սեպուհ Արղ. էրկիւնեան:

* Գշ. 28 Յունիս.— Ս. Գանիէլի մարգարէին եւ երից մանկանցն: Մայր Տա-
ճարի Աւագ Սեղանին վրայ պատարազեց Հոգշ. Տ. Նուրահան Վրղ. Մանուկ-
հան, ուսուցիչն ու վարժիչը նորընծայ Հոգշ. Տ. Սեպուհ Արղ. էրկիւնեանի,
որ կը սպասարկէր Ս. Խորհուրդին:

* Դշ. 29 Յունիս.— Թարգմանչաց Հանդիսաւոր նախատօնակը պաշտուեցաւ
Մայր Տաճարին մէջ: Հանդիսապետն էր Գեբշ. Տ. Շահէ Արքեպս. Աճէմեան:

* Եշ. 30 Յունիս.— Ս. Թարգմանչաց վարդապետացն մերոց Սահակայ եւ
Մեսրոպայ (Տօն ազգային): Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ պատարազեց
Հոգշ. Տ. Մանուէլ Արղ. Երկաթեան: Ս. Պատարազէն ետք, ընկալեալ սոխ-
րութեան համաձայն, կատարուեցաւ հոգեհանդատեան Հանդիսաւոր պաշտա-
մունք՝ Հայ մտքի վաստակաւոր մշակներու հոգիներուն համար: Հանդիսա-
պ'ան էր Գեբշ. Տ. Կիւրեղ Եպս. Գարիկեան:

* Շր. 2 Յուլիս.— Ս. Տրդատայ Խազ. մերոյ, Աշխէն տիկնոջն եւ Խոսրովի-
ղիտոյն: Ս. Պատարազը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Գլխազրի մատու-
ռին մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Բարսեղ Արղ. Գալէմէքեան:

— Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Գեբշ. Տ. Կիւրեղ Եպս. Գա-
րիկեան:

* Կիր. 3 Յուլիս.— Գիւտ Տիպ Ս. Աստուածամի: Ս. Պատարազը մա-
տուցուեցաւ Գեթսեմանիի Ս. Աստուածամանայ Տաճարին մէջ, Տիրամօր Ս. Գե-
բշ. Գեմանին վրայ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Սեպուհ Արղ. էրկիւնեան: Երթ ու
զարժի թափօրները գլխաւորեց Գեբշ. Տ. Կիւրեղ Եպիսկոպոս:

* Ուր. 8 Յուլիս.— Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Լուսարարա-
պետ Գեբշ. Տ. Հայրիկ Արքեպս. Ասլանեան:

* Շր. 9 Յուլիս.— Ս. Երկոտասան առաքելոցն Քրիստոսի եւ Պօղոսի՝ երեք-
տասաներորդ առաքելոյն: Ս. Պատարազը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս.
Պօղոսի վերնամատուռին մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Եղնիկ Արղ. Պալեան:

* Կիր. 10 Յուլիս.— Բարեկենդան Վարդավառի պահոց: Ս. Պատարազը մա-
տուցուեցաւ Ս. Յարութեան վերնատան մեր մատուռին մէջ: Ժամարարն էր
Հոգշ. Տ. Գէորդ Վրղ. Նազարեան:

* Ուր. 15 Յուլիս.— Նախատօնակը պաշտուեցաւ Մայր Տաճարին կից՝ Ս.
Էջմիածին մատուռին մէջ: Հանդիսապետն էր Գեբշ. Տ. Կիւրեղ Եպիսկոպոս:

* Շր. 16 Յուլիս.— Յիշատակ Տապանակին: Ս. Պատարազը մատուցուեցաւ
Ս. Էջմիածին մատուռին մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Յովսէփ Վրղ. Մամուր:

— Այլակերպութեան Հանդիսաւոր նախատօնակը պաշտուեցաւ Մայր Տաճա-
րին մէջ, նախագահութեամբ Ամեն. Պատրիարք Ս. Հօր: Ապա կատարուեցաւ
Տեառնեղբոր Գահակալութեան նուիրում Հանդիսութիւն, որմէ ետք, «Օրհ-
նեցէք զՏէր» շարականի երգեցողութեամբ Միարանութիւնը բարձրացաւ Պատ-
րիարքարան:

— Գիշերասկիզբին, Մայր Տաճարին մէջ պաշտուեցան «Եկեացէ՛ի եւ Հսկման
կարգեր: Հանդիսապետն էր Գեբշ. Տ. Շահէ Արքեպս. Աճէմեան:

* Կիր. 17 Յուլիս.— ՎԱՐԴԱՎԱՌ (Այլակերպութիւն Տեառն): Օրուան հան-
դիսաւոր Ս. Պատարազը՝ Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ մատուց Գեբշ.
Տ. Շահէ Արքեպս. Աճէմեան եւ քարոզեց օրուան խորհուրդին շուրջ, անդրո-

դառնալով նաև թէ Ս. Յակոբ Տեառնեղբայր այս տօնին է որ, ըստ ականդու-
թեան, մատուցած է իր անդրանիկ Ս. Պատարազը Երուսաղէմի մէջ:

— Կէսօրէ ետք, Մայր Տաճարին մէջ կատարուած «Անդաստան»ին նախագա-
հեց Գերշ. Տ. Նորայր Արքեպս. Պողարեան:

* Բշ. 18 Յուլիս. — Յիշատակ մեռելոց: Մայր Տաճարի Ս. Գլխադրի մատու-
ռին մէջ պատարազեց Հայաստանէն Ս. Աթոռ ժամանած Արժ. Տ. Յովհաննէս
ԲՀԵ. Մարութեան: Ապա, Գերշ. Տ. Կիւրեղ Եպս. Գարիկեանի նախագահու-
թեամբ կատարուեցան հոգեհանգստեան կարգեր, նախ Մայր Տաճարին մէջ և
ապա գաւթթր՝ Երան. Տ. Կիւրեղ Բ. Պատրիարք Հօր շիրմին վրայ:

* Ուր. 22 Յուլիս. — Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Գերշ. Տ.
Կիւրեղ Եպս. Գարիկեան:

* Շր. 23 Յուլիս. — Ս. Թաղէոսի առաքելոյն մերոյ եւ Սանդիստոյ կուսին:
Ս. Պատարազը մատուցուեցաւ Ս. Գլխադիր: Ժամարարն էր Հոգշ. Տ. Բար-
սեղ Արղ. Գալէմաէրեան:

* Կիր. 24 Յուլիս. — Ս. Պատարազը մատուցուեցաւ Ս. Յարութեան Տաճա-
րի մերձատան մեր մատուռին մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Ապետ Արղ. Պալ-
եան:

* Շր. 30 Յուլիս. — Ս. Որդւոց եւ Թոռանց Ս. Գր. Լուսաւորչին: Ս. Պա-
տարազը մատուցուեցաւ Ս. Գլխադիր: Ժամարարն էր Հոգշ. Տ. Եղնիկ Արղ.
Պալեան:

* Կիր. 31 Յուլիս. — Ս. Պատարազը մատուցուեցաւ Մայր Տաճարի Աւազ
Սեղանին վրայ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Գէորդ Վրղ. Նաղարեան:

* Շր. 6 Օգոստ. — Ս. Ամտոնի ֆգմաւորին: Ս. Պատարազը մատուցուեցաւ Ս.
Գլխադիր: Ժամարարն էր Հոգշ. Տ. Սեւան Վրղ. Ղարիպեան:

* Կիր. 7 Օգոստ. — Ս. Պատարազը մատուցուեցաւ Ս. Յարութեան Տաճարի
մեր վերնամատուռին մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Գեղարդ Արղ. Տաւուալար-
եան: Ապա կատարուեցաւ «Սաղոցորհնէք»ի ականդական արարողութիւնը՝
նախագահութեամբ Գերշ. Տ. Կիւրեղ Եպս. Գարիկեանի:

* Շր. 13 Օգոստ. — Հայրապետացն Աթանասի եւ Կիրիլի եւ Գրիգորի Աստ-
ուածարանին: Ս. Պատարազը մատուցուեցաւ Ս. Գլխադիր: Ժամարարն էր
Հոգշ. Տ. Գէորդ Վրղ. Նաղարեան:

* Բշ. 15 Օգոստ. — Այսօր սկսան Ս. Կոյսի Վերափոխման տօնը կանխող հան-
դիսաւոր Ս. Պատարազները՝ Գեթսեմանիի Ս. Աստուածածնայ Տաճարին մէջ՝
Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ:

* Շր. 20 Օգոստ. — Եփեսոսի Ս. Ժողովոյն (431): Ս. Պատարազը մատուց-
ուեցաւ Գեթսեմանիի Ս. Աստուածածնայ Տաճարին մէջ, Տիրամօր Ս. Գերեզ-
մանին վրայ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Բարսեղ Արղ. Գալէմաէրեան:

* Կիր. 21 Օգոստ. — Բարեկեցեալ Ս. Աստուածածնի պահոց: Ժէ. Տարեղարծ
Գաիակալութեան Ամեն. Տ. Եղիշէ Ս. Պատրիարքին: Ս. Պատարազը մատուց-
ուեցաւ Գեթսեմանիի Ս. Աստուածածնայ Տաճարին մէջ, Տիրամօր Ս. Գերեզմա-
նին վրայ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Եղնիկ Արղ. Պալեան:

* Ուր. 26 Օգոստ. — Նախատօնակը պաշտուեցաւ Մայր Տաճարին կից Ս. Էջ-
միածին մատուռին մէջ: Հանդիսապետն էր Գերշ. Տ. Կիւրեղ Եպս. Գարիկեան:

* Շր. 27 Օգոստ. — Տօն Ծողակաբի Ս. Էջմիածնի: Իրաւական սովորութեան
համաձայն, այսօրուան մեր Ս. Աստուածածնայ Տաճարի Ս. Պատարազը կը
մատուցուի առաւօտեան կանոնի, մութ ժամերուն: Առ այդ, ժամը 1.30-ին,
Հոգեշնորհ Հայրեր, Ժառանգաւոր սաներ եւ բաւական թողութիւն իջան Գեթ-
սեմանիի ձորը, ուր Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ պատարազեց Հոգշ. Տ. Կո-
միտաս Արղ. Շէրպէթեան:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ

* Բշ. 2 Մայիս. — Հոլանտայի ձուլիանա թաղուհիի ծննդեան տարեդարձի առիթով, Հոլանտական Ընդհ. Հիւպատոսարանի հրաւերին ընդառաջելով, Հիւպատոսարանի տան մէջ սարքուած ընդունելութեան ներկայ գտնուեցաւ Գերշ. Տ. Կիւրեղ Եպոս. Գարիկեան, ընկերակցութեամբ առժժ. Աւագ Թարգման Հոգշ. Տ. Ասպետ Արղ. Պայեանի եւ Տիար Գէորղ Հինդլեանի:

* Եշ. 12 Մայիս. — Իսրայէլի կողմէ Հին Քաղաքի զբաւման 10ամեակի առթիւ Հրէից թաղի մէջ կրօնական ընծայարանի մը բացման հանդիսութեան ներկայ գտնուեցան Գերշ. Տ. Կիւրեղ Եպոս. Գարիկեան, Հոգշ. Տ. Գեղարղ Արղ. Տաւուպրեան, Հոգշ. Տ. Ասպետ Արղ. Պայեան եւ Հոգշ. Տ. Հայկապոս Արղ. Մեղոնեան:

* Ծբ. 14 Մայիս. — Կէսօրէ ետք, Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արք.

— Կէսօրէ ետք ժամը 3:30-ին, Գերշ. Տ. Շահէ Արքեպոս. Աճէմեանի զլիսուորութեամբ, Միարանութիւնը ինքնաշարժներով մեկնեցաւ Գեթսեմանիի ձորը եւ ժամ մը շնչեցած՝ «Հրաշափառ»ով մուտք գործեց Ս. Աստուածածնայ Տաճար, ուր պաշտուեցան երեկոյեան ժամերգութիւնն ու Վերափոխման մեծահանդէս նախատօնակը:

— Գիշերասկիզբին, նոյն Տաճարին մէջ պաշտուեցան «Եկեցէ՛ք» եւ Հսկման կարգեր եւ ապա գիշերային եւ առաւօտեան ժամերգութիւններ, որոնք տեւեցին մինչեւ գիշերուան ժամը 10: Հանդիսապետն էր Հոգշ. Տ. Հայկապոս Վրղ. Պայրամեան:

* Կիր. 28 Օգոստ. — ՎԵՐԱՓՈՒՆՈՒՄՆ Ս. ԱՍՏՈՒԱՄԱԾՆԻ: Առաւօտեան ժամը 9-15-ին, դարձեալ Գերշ. Տ. Շահէ Արքեպոս. Աճէմեանի զլիսուորութեամբ, Միարանութիւնը երէկուան նման ինքնաշարժներով մեկնեցաւ Գեթսեմանիի ձորը, եւ ժամը 10-ին «Հրաշափառ»ով մուտք գործեց Ս. Աստուածածնայ Տաճար, որ ինչպէս երէկ, այսօր եւս լիցուն էր բացի Հայերէ, նաև Յոյն եւ Ասորի համայնքներու անդամներով, այս տարի մեր եւ անոնց տօնը նոյն օրուան զուգարիպած ըլլալուն: Բազմաթիւ հաւատացեալներ իրենց բարեպաշտական զգացումները արտայայտած էին, մտեր վառելով հնադարեան եւ կիսամութ Տաճարի 38 սանդուխներէն իւրաքանչիւրին վրայ: Օրուան հանդիսաւոր Ս. Պատարարը՝ Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ մատուց Գերշ. Հանդիսապետ Մրրադանը եւ ապա նախագահեց սրբավայրին առջև կատարուած «Անդաստան»ին:

— Կէսօրէ ետք, Մայր Տաճարին մէջ պաշտուած «Անդաստան»ին, ինչպէս նաև ժամերգութեան աւարտին կատարուած նախատօնակին նախագահեց Գերշ. Տ. Կիւրեղ Եպոս. Գարիկեան:

* Բշ. 29 Օգոստ. — Յիշատակ մեռելոց: Ս. Պատարազը մատուցուեցաւ Ս. Գլխադիր: Ժամաբարն էր Հոգշ. Տ. Սեւան Վրղ. Ղարիպեան: Ապա, Գերշ. Տ. Կիւրեղ Եպոս. Գարիկեան նախագահեց հոգեհանգստեան պաշտամունքներուն, նախ Մայր Տաճարին մէջ եւ ապա գաւիթը՝ Երանշնորհ Տ. Կիւրեղ Բ. Պարք. Հօր շիրիմին վրայ:

Ասլաննան, Մխարանութեան անդամներուն ընկերակցութեամբ, բացումը կատարելը Ս. Քարգամնչաց Երկրդ. Վարժարանի Տարեկան Պաշարին:

* Ուր. 27 Մայիս. — Սէյնթ Ճօրճ Անկլիքան եկեղեցիին մէջ, Անգլիոյ մէջ վախճանած Երուսաղէմի նախկին Եպիսկոպոս Քամփալէյլի հողոյն համար կատարուած պաշտամունքին ներկայ գտնուեցան Գերշ. Տ. Կիւրեղ Եպս. Գարիկեան եւ Հոգշ. Տ. Հայկազուն Արղ. Մելիզնեան:

* Բշ. 30 Մայիս. — Երեկոյեան, Հոգեզալստեան տօնին առթիւ, Ռուսաց Վանքի Մեծաւորին կողմէ տրուած ընդունելութեան ներկայ գտնուեցան Գերշ. Տ. Կիւրեղ Եպս. Գարիկեան, Հոգշ. Տ. Սասկեա եւ Հայկազուն Արեղանեք եւ Տիար Գէորդ Հինդլեան:

* Եշ. 2 Յունիս. — Երեկոյեան, Իտալիոյ ազգային տօնին առթիւ, Իտալական Ընդհ. Հիւպատոսին կողմէ, Հիւպատոսարանի տան մէջ սարքուած ընդունելութեան ներկայ գտնուեցան Գերշ. Տ. Կիւրեղ Եպս. Գարիկեան, Հոգշ. Տ. Ասպեա Արեղայ եւ Տիար Գէորդ Հինդլեան:

* Բշ. 6 Յունիս. — Անգլիոյ էլիզապէթ Բ. թագուհիի գահակալութեան 25-ամեակին առթիւ, Անկլիքաններու Սէյնթ Ճօրճ եկեղեցիին մէջ կատարուած Գոհարանական Մաղթանքին ներկայ գտնուեցան Գերշ. Տ. Կիւրեղ Եպս. Գարիկեան եւ Հոգշ. Տ. Ասպեա Արեղայ Պալեան:

* Եշ. 9 Յունիս. — Անգլիոյ թագուհիին ծննդեան եւ գահակալութեան տարեդարձներու առթիւ, Բրիտանական Ընդհ. Հիւպատոսին կողմէ, Հիւպատոսարանի տան մէջ տրուած ընդունելութեան ներկայ գտնուեցաւ Ամեն. Պատրիարք Ս. Հայրը, ընկերակցութեամբ Հոգշ. Տ. Ասպեա Արղ. Պալեանի եւ Տիար Կարպիս Հինդլեանի:

* Ուր. 24 Յունիս. — Կէսօրէ ետք, Եւրոպացաց Ս. Յովհ. Կարապետի ծննդեան տօնին առթիւ, Սէյնթ Ճօնզ Ակնարուժարանի մէջ տրուած ընդունելութեան ներկայ եղան Գերշ. Տ. Կիւրեղ Եպիսկոպոս եւ Հոգշ. Տ. Ասպեա Արեղայ, որոնք պառ ներկայ եղան Սպանական Ընդհ. Հիւպատոսին կողմէ, Սպանիոյ Աւան Քարլոս թագաւորի անուան տօնին առթիւ Հիւպատոսարանի մէջ տրուած ընդունելութեան:

* Եշ. 30 Յունիս. — Երեկոյեան, Հոռմի Ն. Ս. Պօղոս Զ Պապի գահակալութեան 14-րդ տարեդարձին առթիւ, Պապական Նուիրակի կողմէ իր պարանքին մէջ տրուած ընդունելութեան ներկայ գտնուեցաւ Գերշ. Տ. Շահէ Արք.:

* Բշ. 4 Յուլիս. — Միացեալ Նահանգներու անկախութեան 201-րդ տարեդարձին առթիւ, Կէսօրէ ետք, Ամերիկեան Ընդհ. Հիւպատոսին կողմէ, Հիւպատոսարանի պարտէզին մէջ տրուած ընդունելութեան ներկայ գտնուեցան Ամեն. Պատրիարք Ս. Հայրը, Գերշ. Տ. Կիւրեղ Եպս. Գարիկեան եւ Հոգշ. Տ. Ասպեա Արղ. Պալեան:

* Գշ. 5 Յուլիս. — Վէնէզուէլայի ազգային տօնին առթիւ, Երեկոյեան, Վէնէզուէլայի Ընդհ. Հիւպատոսին կողմէ, Հիւպատոսարանի մէջ սարքուած ընդունելութեան ներկայ եղան Գերշ. Տ. Կիւրեղ Եպս. Գարիկեան, Հոգշ. Տ. Ասպեա Արղ. Պալեան եւ Տիար Գ. Հինդլեան:

* Եշ. 14 Յուլիս. — Ֆրանսական Յեղափոխութեան 188-րդ տարեդարձին առթիւ, Կէսօրէ ետք, Ֆրանսական Ընդհ. Հիւպատոսին կողմէ, Հիւպատոսարանի պարտէզին մէջ տրուած ընդունելութեան ներկայ գտնուեցան Ամեն. Պատրիարք Ս. Հայրը, Գերշ. Տ. Շահէ Արք. Աճէմեան, Գերշ. Տ. Կիւրեղ Եպս. Գարիկեան եւ Տիար Կ. Հինդլեան: